ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՌՀ

www.tvradio.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ — 3
2. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ — 4
3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ — 6
4. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ — 7
5. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ — 10
6. ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ — 11
7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ — 12
   - Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ — 12
   - Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ — 17
   - Առանց լիցենզիա հեռարձակում իրականացնող մեդիածառայություն մատուցողներ — 19
8. ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ — 21
9. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ — 23
   - *Լիցենզավորման նոր ընթացակարգեր* — 23
   - *2020 թվականի լիցենզավորման ցուցանիշներ* — 24
   - Լիցենզավորման մրցույթներ — 24
   - *Հեռարձակման և վերահեռարձակման թույլտվությունների տրամադրման գործընթաց* — 25
10. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ — 25
11. ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ — 26
   - *Մշտադիտարկման աշխատանքների ամփոփ ներկայացում* — 26
   - *Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթներ* — 31
12. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ — 33
13. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՅԻ ՄՈՒՏՔԵՐ — 35
14. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ — 35
   - Տեղեկատվություն Հանձնաժողովի նիստերի և ընդունված իրավական ակտերի վերաբերյալ — 35
   - Տեղեկատվություն Հանձնաժողով հասցեագրված գրությունների և քաղաքացիների հարցումների վերաբերյալ — 37
   - Հանձնաժողովի անձնակազմի կառավարում — 37

Հավելված 1 — 39
Հավելված 2 — 42
Հավելված 3 — 47
Հավելված 4 — 49
Հավելված 5 — 51

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածների համաձայն կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Ազգային ժողով է ներկայացնում 2020 թվականի իր գործունեության և տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

Հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (այսուհետ նաև՝ Հեռարձակողներ), օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը: Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Տարեկան հաղորդման մեջ ներկայացված են փաստացի տվյալների հիման վրա կատարված վերլուծությունների արդյունքները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում Հեռարձակողների ծրագրերում տեղեկատվության ազատության վիճակի մասին, Հանձնաժողովի գործունեության անկախության, թափանցիկության և հաշվետվողականության, Հանձնաժողովի լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ (ներառյալ՝ հեղինակազորման, հայտարարված մրցույթների, տրված լիցենզիաների, ցանցային օպերատորների գործունեության լիցենզավորման համար ներկայացված ու մերժված դիմումների և դրանց հիմնավորման, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ներկայացրած տեսալսողական ծրագրերի, բացահայտված խախտումների և դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների և այլ լիազորությունների իրականացման մասին), ինչպես նաև՝ Հանձնաժողովի միջազգային համագործակցության և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ:

2 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության հիմնական իրավական հիմքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն է, որը երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների, այդ թվում՝ տեսալսողական մեդիայի ազատությունն ու անկախությունը:

Հանձնաժողովը բարձր է գնահատում Հայաստանի լրատվամիջոցների և, մասնավորապես, Հեռարձակողների ազատ գործելու առաջընթացը նախորդ երեք տարիներին: Այսպես, մամուլի ազատության համաշխարհային ցուցիչի համաձայն (https://rsf.org/en/ranking/2020), Հայաստանի Հանրապետությունը 2019 թվականին՝ 2018 թվականի համեմատ 19 կետով բարելավել էր իր դիրքերը և 2020 թվականին պահպանել է այն, շարունակելով զբաղեցնել 61-րդ տեղը ցուցակում ընդգրկված 180 պետությունների շարքում՝ հետևում թողնելով հետխորհրդային գրեթե բոլոր երկրները, ինչպես նաև Հունաստանը, Լեհաստանը, Ճապոնիան, Հունգարիան, Իսրայելը և այլն:

Էական նշանակություն է ունեցել իշխանությունների հռչակած ժողովրդավարական սկզբունքը, այն է՝ մամուլի իրական ազատության ապահովումը, լրատվամիջոցների գործունեությանը չմիջամտելու ստանձնած պարտավորությունը: Միջազգային կառույցների, Հայաստանի Հանրապետության մեդիաոլորտի փորձագետների գնահատականները, Հանձնաժողովի ուսումնասիրությունները, գործնական շփումները Հեռարձակողների հետ վկայում են, որ իշխանությունները հիմնականում հավատարիմ են եղել իրենց հռչակած սկզբունքներին և ստանձնած պարտավորություններին: 2020 թվականին Հեռարձակողների խմբագրական և կադրային քաղաքականությանը միջամտելու, կամ միջամտելու փորձերի, կարծիքների արտահայտման իրավունքը սահմանափակելու, Հեռարձակողների բնականոն աշխատանքը խոչընդոտելու վերաբերյալ էական նշանակություն ունեցող բողոքներ Հանձնաժողովը չի ստացել: Ստացված բողոքները մեծ մասամբ վերաբերել են եթերի ժամանակ Հեռարձակողների տաղավարում լրագրողների, հաղորդավարների դիմակ կրելու պարտադիր պահանջին: Հանձնաժողովի ուսումնասիրությունները տաղավարում դիմակ կրելու պարտադիր պահանջի կարգավորումների վերաբերյալ, թույլ է տալիս եզրակացնել, որ արտակարգ դրության պարետի որոշումներում սահմանված են բարդ, ոչ հստակ, երբեմն նաև ոչ տրամաբանված ձևակերպումներ և պահանջներ, որոնք հաշվի չեն առել լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները: Այդ պատճառով անորոշ վիճակում էր հայտնվել Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, որը պարտականություն ուներ ապահովելու համավարակի դեմ պայքարի նպատակով սահմանված պահանջների պատշաճ կիրառությունը կամ վերահսկողություն իրականացնելու դրանց նկատմամբ և ստիպված էր պատիժներ սահմանել մի շարք տեսալսողական մեդիածառայություն մատուցողների նկատմամբ:

Մեզ համար անհասկանալի էր, նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված սահմանափակումների կիրառման հարցում, Հանձնաժողովին անհրաժեշտ լիազորություններ չվերապահելը, քանի որ Հանձնաժողովն է այս ոլորտի սահմանադրական անկախ կարգավորող մարմինը: Արդյունավետ կլիներ, եթե արտակարգ դրության պայմաններում Հանձնաժողովն ունենար հատուկ կանոններ կամ չափանիշներ սահմանելու իրավասություն, որոնք կվերաբերեին լրագրողական գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը: Հանձնաժողովը պետք է հնարավորություն ունենար իրականացնելու այդ կանոնների պահպանության նկատմամբ

վերահսկողություն և անհրաժեշտության դեպքում՝ պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն: Այդպիսի կարգավորումները կնվազեցնեին կոնֆլիկտային իրավիճակները և չէին առաջացնի լիցենզավորված Հեռարձակողների արդարացի դժգոհությունը:

Մի շարք լիցենզավորված Հեռարձակողներ, Հանձնաժողովի ուշադրությունն են հրավիրել որոշ պաշտոնական անձանց, այդ թվում՝ Ազգային ժողովի պատգամավորների խտրական, անհարգալից, երբեմն՝ արհամարհական վերաբերմունքի դրսևորումներին տվյալ լրատվամիջոցների և լրագրողների նկատմամբ: Այնուամենայնիվ, Հանձնաժողովի կարծիքով բացասական այդպիսի դրսևորումները համակարգված բնույթ չեն կրել և չեն վտանգել լրատվամիջոցների ազատությունն ու անկախությունը:

Հանձնաժողովը կրկնում է նախորդ զեկույցի իր այն հիմնավոր կարծիքը, որ դրական ընդհանուր գնահատականը ամենևին չի նշանակում, որ Հանձնաժողովն այդ ոլորտում տեղեկատվության ազատության և մատչելիության վիճակը համարում է բավարար, իսկ հեռարձակող լրատվամիջոցների ազատությունը, անկախությունը, բազմակարծությունն ու բազմազանությունը՝ որպես կայացած և անշրջելի ձեռքբերում: Այս ոլորտի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները բազմաթիվ են. սահմանափակ ռեսուրսի (հանրային թվային մուլտիպլեքս, FM տիրույթի ռադիոհաճախություններ) օգտագործման պետական հայեցակարգի բացակայությունը, կարգավորման ներքո գտնվող Հեռարձակողների և համացանցում տեսալսողական ծառայություններ մատուցող ընկերությունների միջև մրցակցային անհավասար պայմանները, վերջին տարիներին գովազդի ծավալների կտրուկ անկումը, տեսալսողական մեդիածառայություն մատուցողների իրական սեփականատերերի բացահայտման հստակ մեխանիզմների բացակայությունը, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների պայթյունային զարգացումը և այլն: Հաշվետու տարվա ընթացքում ի հայտ եկան նաև նոր գործոններ, որոնք լուրջ խոչընդոտներ առաջացրին Հայաստանի Հանրապետությունում անկախ, հանրային շահը սպասարկող տեսալսողական մեդիածառայությունների կայուն համակարգ ստեղծելու ճանապարհին: Կովիդ-19 համավարակի տարածումը, արցախյան 2-րդ պատերազմը վատթարացրին երկրի տնտեսական վիճակը, մեծացրեցին քաղաքական և սոցիալական լարվածությունն ու անկայունությունը, հասարակության լայն շերտերի անկումային տրամադրությունները: Հանրային մուլտիպլեքսում սփռվող մի քանի տեսալսողական ծրագրերի բովանդակությունը սկսեց լցվել ատելության խոսքով, մանիպուլյատիվ հնարքներով, ապատեղեկատվությամբ, վիրավորանքներով: Հեռարձակողների անկախությունը, անաչառությունն էլ ավելի սահմանափակվեց որոշ Հեռարձակողների հիմնադիրների, փայատերերի, տարատեսակ քաղաքական ուժերի և անհատների ազդեցությամբ ու միջամտությամբ խմբագրական քաղաքականությանը:

Հեռարձակողների տեսալսողական ծրագրերի խմբագրական քաղաքականությունը շարունակում էր համընկնել նրանց սեփականատերերի հետաքրքրությունների հետ: Տարատեսակ ազդեցություններով և միջամտություններով էր նաև պայմանավորված այն հանգամանքը, որ մի շարք վերգետնյա Հեռարձակողներ շարունակեցին անտեսել հանրային շահը, քաղաքացիների իրավունքը՝ ստանալու անկողմնակալ և բազմազան տեղեկատվություն:

2020 թվականին Հանձնաժողովը հետևողականորեն պաշտպանել է լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը, հանդես է եկել հայտարարություններով, միջնորդություններով և պարզաբանումներով, կոնֆլիկտային իրավիճակներում բազմաթիվ անգամ միջնորդի դեր է ստանձնել Հեռարձակողների և

իշխանության տարբեր ինստիտուտների միջև, համագործակցել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, տեսալսողական մեդիայի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Միաժամանակ, Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում սկզբունքորեն պայքարել է խոսքի ազատության չարաշահումների դեմ, վարչական տույժերի է ենթարկել մի քանի մեդիածառայություն մատուցողների:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հայաստանում դեռևս ձևավորված չէ տեսալսողական մեդիածառայությունների մատուցման և սպառման այնպիսի համակարգ, որը կբնութագրվեր Հեռարձակողների լիարժեք անկախությամբ, ազատությամբ, բազմակարծությամբ, բազմազանությամբ և կսպասարկեր հանրային շահը:

3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովն արձանագրում է, որ հաշվետու տարում պետական մարմինները, գործադիր, օրենսդիր, դատական իշխանության ներկայացուցիչները չեն միջամտել Հանձնաժողովի գործունեությանը կամ՝ որոշումների ընդունմանը: Կարգավորող մարմնի ստեղծումից ի վեր՝ հասարակության հիմնավոր մտահոգությունը Հանձնաժողովի իրական անկախության, հաշվետվողականության, գործունեության թափանցիկության վերաբերյալ կտրուկ նվազել է: Այդ մասին են վկայում նաև միջազգային կառույցների, Հայաստանի հասարակական սեկտորի ներկայացուցիչների, լրատվամիջոցների արձագանքները, գնահատականները՝ Հանձնաժողովի գործունեության և կայացրած որոշումների վերաբերյալ: Անշուշտ, եղել են հազվադեպ փորձեր ուղղորդել Հանձնաժողովը «ճիշտ որոշում» ընդունելու նպատակով, սակայն այդպիսի փորձերը ապարդյուն են եղել:

Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորման գործընթացին իշխանության տարբեր ինստիտուտների, քաղաքական ուժերի միջամտության բացակայությունը թույլ է տվել Հանձնաժողովին հաշվետու տարում էապես բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը, ինչպես նաև՝ գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

2019 թվականին գործարկված նոր, ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված Հանձնաժողովի պաշտոնական ինտերակտիվ կայքի (www.tvradio.am) և ֆեյսբուքյան էջի (https://www.facebook.com/tvradio.Armenia/) միջոցով հանրությանը և պետական հաստատություններին պատշաճ և ժամանակին ներկայացվել են կատարված աշխատանքները, դրանց արդյունքները, ապահովվել է հետադարձ կապը հանրության հետ:

Հանձնաժողովի նիստերն անցկացվել են դռնբաց (բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի) և հաճախ՝ կապված հարցի կարևորությունից և հանրային հետաքրքրությունից՝ ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի ընդունումից հետո, անկախ կորոնավիրուսային համավարակի (COVID-19) առաջացման և տարածման հետևանքով ստեղծված դժվարություններից և սահմանափակումներից Հանձնաժողովը կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, դասընթացներ (այդ թվում առցանց եղանակով) լիցենզավորված Հեռարձակողների, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումներ և

դասընթացներ են անցկացվել նաև հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման համար մրցույթին հայտ ներկայացրած հեղինակազորված կազմակերպությունների համար:

Հանձնաժողովի գործունեության մասին հանրության իրազեկման նպատակով կազմակերպվել և անցկացվել են մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ հարցազրույցներ: Հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ տեղեկատվական նյութեր: Հանրության, հեռարձակող կազմակերպությունների և մեդիամասնագետների համար Հանձնաժողովը պարբերաբար պատրաստել և հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքներ, վերլուծական հոդվածներ, գծապատկերներ, մշտադիտարկման արդյունքների ամփոփագրեր և այլն:

Նախորդ տարեկան հաղորդման մեջ Հանձնաժողովը նշել էր, որ գործող օրենսդրությունը պարունակում է ակնհայտ իրավական թերություններ, որոնք կարգավորող մարմնի համար չեն ապահովում ֆինանսական անկախության արդյունավետ գործիքներ: Գոհունակությամբ պետք է նշենք, որ նոր օրենքում ամրագրվել է Հանձնաժողովի ֆինանսական անկախությունը երաշխավորող լրացուցիչ մեխանիզմ, որը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված ստանդարտներին:

Հանձնաժողովի գործունեության անկախության լրացուցիչ երաշխիք է նաև օրենսդրորեն ամրագրված այն դրույթը, որ Հանձնաժողովը, Հանձնաժողովի անդամները և Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են, ենթարկվում են միայն օրենքին և չի թույլատրվում անօրինական ազդեցություն և միջամտություն նրանց գործունեությանը:

4 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2019 թվականի տարեկան հաղորդման մեջ Հանձնաժողովը կարևորել էր տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող նոր օրենքի ընդունումը: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» գործող օրենքը հնացած, բազմաթիվ թերի դրույթներ պարունակող իրավական փաստաթուղթ էր, և այն չէր համապատասխանում տեսալսողական մեդիածառայությունների ներկա համայնապատկերի բնութագրիչներին: Գոհունակությամբ պետք է նշել, որ իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունվեց և 2020 թվականի օգոստոսի 07-ին ուժի մեջ է մտել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը:

Տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող Օրենքով նոր կարգավորումներ են սահմանվել, փոփոխվել և ավելացել են նոր հասկացություններ:

Օրենքի կարևորագույն սահմանված նորմերից է տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովումը և այս նորմը ներառում է իր մեջ բազմաթիվ հասկացություններ: Այս դրույթը մեծ ծավալի հասարակական հարաբերություններ է կարգավորում, և տեղեկատվության ապահովումն ենթադրում է նաև որոշակի պատասխանատվություն, ինչի արդյունքում հնարավոր կլինի արդար, օբյեկտիվ և ազնիվ տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ մեդիայի ոլորտում: Իսկ տեղեկատվության հավաստիության բացահայտման համար բավարար չէ միայն հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումը, այլ անհրաժեշտ է նաև տեղեկատվության խորը վերլուծություն և համադրում իրավական նորմերի հետ:

Օրենքով սահմանվել են նաև տեսալսողական հաղորդումների չարաշահման նոր արգելքներ՝ ուղղված այս ոլորտում ատելության խոսքի վերացմանը, արգելված արարքների կոչերի տարածմանը:

Նոր Օրենքով յուրաքանչյուր ոք ունի տեսալսողական մեդիածառայություն մատուցողների միջոցով կարևոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունք և էական է այն հանգամանքը, որ Հանձնաժողովը պետք է կարողանա միջոցներ ձեռնարկել, որպեսզի պաշտպանի հասարակության կարևոր իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Հանձնաժողովի վերահսկողական գործունեության հետ կապված նույնպես նոր կարգավորումներ են նախատեսվել: Մասնավորապես ավելացել են հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների արդյունքում լիցենզիայի պայման հանդիսացող՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ներկայացված նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի, էթիկայի կանոնագրի և էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցների ապահովման հետ կապված վերահսկողական աշխատանքները: Օրենքի նոր կարգավորումները թույլ են տալիս նաև տեխնիկական հնարավորության առաջացման դեպքում հայտարարել նոր մրցույթներ, հետևաբար ի հայտ եկող նոր լիցենզավորված Հեռարձակողներ, ինչը նախկին օրենքով հնարավոր չէր իրականացնել:

Ժամանակակից մեդիայի ոլորտի անընդհատ զարգացման պայմաններում, տեսալսողական հաղորդումների ներկայիս վիճակը, այդ թվում՝ հոգևոր արժեքների և ազգային մշակույթների, կրթությանը խթանող տեսալսողական հաղորդումների քանակը, նրանց որակական հատկանիշները այսօրվա տեղեկատվության, պահանջների և մարտահրավերների պայմաններում չէին բավարարում հանրության կարիքները: Այս պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է բարձրացնել ոչ միայն մշակութային և կրթական թեմատիկայի լուսաբանման որակն ամենօրյա տեսալսողական հաղորդումներում, այլև տեսալսողական ծրագրերում պահպանել տարբեր հաղորդումների հավասարակշռվածությունը՝ ընդլայնելով և խորացնելով տեսալսողական ծրագրերի մշակութային, կրթական և մանկական բաղադրիչը: Եվ այս պահանջները բավարարելու համար անհրաժեշտություն առաջացավ օրենսդրորեն ամրագրել այն դրույթը, որ լիցենզիա ստացած Հեռարձակողների ծրագրերում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

Օրենքով Հանձնաժողովին տրված է նաև լիազորություններ՝ տեսալսողական մեդիայի ոլորտի քաղաքականության մշակման աշխատանքներին մասնակցելու, օրենքից բխող որոշումների կայացման և նորմատիվ ակտերի նախագծերին եզրակացություն տալու ավելի լայն լիազորություններ:

Բոլորովին նոր գործառույթ է Հանձնաժողովի կողմից հեղինակազորման շատ պարզ ընթացակարգը, դա ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող այն փաստաթուղթն է, որը հնարավորություն է տալիս այն տեսալսողական մեդիածառայություն մատուցողներին, որոնք գործում են Օրենքի գործողության ոլորտում, Հանձնաժողովի վերահսկողության ոլորտ ներգրավելու և մեդիայի ոլորտում հավասարություն ստեղծելու համար:

Նոր օրենսդրական փոփոխությունների համաձայն, շատ պարզ, կոռուպցիոն ռիսկեր չպարունակող ընթացակարգեր են սահմանվել, ինչպես ցանցային օպերատորների

գործունեության լիցենզիա ստանալու, այնպես էլ վերջիններիս կողմից վերահաղորդում իրականացնելու համար:

Հանձնաժողովի կարգավորման և վերահսկողության ներքո են գործելու նաև տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք տարածման նպատակով տրամադրում են տեսալսողական ծրագրեր: Սա ևս նոր գործառույթ է Հանձնաժողովի համար: Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների հետ աշխատանքը առաջին հերթին կդյուրացնի ցանցային օպերատորների գործունեությունը, քանի որ դիստրիբյուտորների կողմից տեսալսողական ծրագրերի վերաբերյալ Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո, այդ տեղեկատվությունը Հանձնաժողովի պաշտոնական կայքի միջոցով հասանելի է նրանց և հնարավորություն է տալիս տեղեկացված լինել դիստրիբյուտորների տեսալսողական ծրագրերին:

Տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրությունը և լիցենզիայի պայմանները խախտելու հետևանքով պատասխանատվության միջոցներում նույնպես կատարվել են մոդելային փոփոխություններ: Պատասխանատվության միջոցը կիրառվում է հաշվի առնելով սուբյեկտի նախորդ տարվա հասույթը, որը թույլ է տալիս չկիրառել նույն չափի ֆինանսական տույժ տարբեր շրջանառություն ունեցող սուբյեկտների նկատմամբ:

Օրենսդրության պահանջները խախտելու դեպքում ավելացել են նաև տուգանքները և դրանց կիրառման նոր մեխանիզմները: Հանձնաժողովի կողմից Օրենքի համաձայն կիրառվում է նոր պատասխանատվության միջոց՝ հեղինակազրկման և լիցենզիայի գործողության կասեցում:

Նախորդ տարիներին Հանձնաժողովի կողմից բարձրաձայնվել է այն օրենսդրական բացթողման մասին, որ սահմանափակված է մասնավոր լսողական մեդիածառայություն (ռադիո) մատուցողների համար մրցույթով ռադիոհաճախականությունների տրամադրումը: Այդ առումով անհասկանալի էր հատկապես մարզային սփռում իրականացնող լսողական մեդիածառայություն մատուցողների սահմանափակումը: Այժմ Օրենքով այդ սահմանափակումը վերացված է:

Արձանագրենք նաև, որ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման համար նույնպես սահմանվել են ներդրողների համար գրավիչ պայմաններ և կարգավորումներ, մասնավորապես՝ մուլտիպլեքս օպերատորի գործունեության սփռման տարածքը այժմ կարող է ընդգրկել մեկ մարզի կամ Երևան քաղաքի տարածքը, լիցենզիան տրվում է անժամկետ և վերացել է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի կողմից սեփական հեռարձակման թվային ցանց ունենալու պարտավորությունը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ տեսալսողական մեդիայի գործունեությունը կարգավորող նոր օրենքն ուղղված է արդեն իսկ գոյություն ունեցող տարբեր մեդիա ընկերությունների գործունեությունը դյուրին դարձնելուն և վերջիններիս դերին և դիրքին համաչափ ու համապատասխան իրավունքների և պարտականությունների համակարգ ստեղծելուն՝ խուսափելով ավելորդ կամ անհամաչափ սահմանափակումներից: Դյուրին է դարձվել նաև նոր մեդիա ընկերությունների մուտքը շուկա, և Հանձնաժողովին վերապահված է նոր լիազորություններ: Սակայն, արձանագրենք նաև, որ չնայած նշված այս բոլոր կարգավորումներին, Օրենքի դրույթները գործնականում կիրառելիս առաջացել են որոշ թնջուկներ, ուստի առաջացել է Օրենքի որոշ դրույթների հստակեցման և փոփոխման անհրաժեշտություն: Թնջուկները, որոնք առաջացել են Օրենքի դրույթների և

դրանք գործնականում կիրառելու արդյունքում, հանգեցրել են Հանձնաժողովի կողմից առաջարկությունների ձևավորման, առաջիկայում այն ներկայացնելու նպատակով:

5 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել են 114 լիցենզավորված ընկերություններ, այդ թվում՝ 28 տեսալսողական և 18 լսողական մեդիածառայություն մատուցողներ, ինչպես նաև 68 ցանցային օպերատորներ, հեղինակազրկվել են 38 ընկերություններ: Հեղինակազրկված 38 ընկերություններից 22-ը լիցենզավորված են, իսկ 16 ընկերությունների տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են ցանցային օպերատորների կողմից:

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին «Հեռուստատեսության և ռադիոյի» մասին օրենքի համաձայն առանց լիցենզիայի հեռարձակվել են նաև հանրային հեռարձակողի 2 տեսալսողական և 4 լսողական ծրագրեր, ինչպես նաև միջպետական պայմանագրի հիման վրա վերահաղորդվել են 1 տեսալսողական և 2 լսողական ծրագրեր:

Ստորև ներկայացվում է տեսալսողական մեդիայի ոլորտում գործող ընկերությունների թվաքանակը արտացոլող գծապատկերը՝



Ինչպես նաև տեսալսողական մեդիայի ոլորտում գործող ընկերությունների թվաքանակի համեմատական վերլուծության և բաշխվածության գրաֆիկական պատկերը.



Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին (Օրենքի ընդունումից հետո) Հանձնաժողովի կողմից հաստատվել են տեսալսողական ծրագրերի 7 դիստրիբյուտորի կողմից ներկայացված 130 տեսալսողական ծրագրերի ծանուցումները:

6 ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Բոլորովին նոր հասկացություն է հեղինակազորումը և այն նախատեսվել է մեդիայի ոլորտն ամբողջությամբ կարգավորելու նպատակով: Հեղինակազորման ընթացակարգը բավականին պարզ է, դյուրին՝ ի տարբերություն լիցենզավորման: Այս մոդելի նպատակն է, որ բոլոր տեսալսողական մեդիածառայությունները նախ պետք է հեղինակազորվեն և որպեսզի դա չհամարվի ավելորդ վարչարարություն, հեղինակազորման վկայագիր ստանալու գործընթացը բավականին հստակեցված և պարզեցված է: Հեղինակազորման վկայագիրը տրվում է անժամկետ:

Հեղինակազորումը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս առանց լիցենզիայի մատուցել տեսալսողական մեդիածառայություններ՝ ցանցային օպերատորի, իսկ հետագայում նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով:

Հարկ է նշել, որ եթե նախկինում սեփական տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորների կողմից հեռարձակելու կամ այլ ցանցային օպերատորների կողմից վերահեռարձակելու համար պահանջվում էր լիցենզիա և սեփական արտադրության ծրագրերը հեռարձակելու թույլտվություն, ապա այժմ անհրաժեշտ է միայն հեղինակազորվել:

Հեղինակազորման գործառույթի շրջանակում, Հանձնաժողովի կողմից 2020 թվականին հեղինակազորվել է 38 ֆիզիկական և իրավաբանական անձ *(Հավելված 1):*

Հեղինակազորված ընկերությունների տեսալսողական ծրագրերի ընդհանուր թիվը կազմել է 71 և նշված ծրագրերի մի մասը հեռարձակվում են հանրային մուլտիպլեքսում, իսկ մյուս մասը՝ վերահաղորդվում են ցանցային օպերատորների կողմից:

Ահա այսպիսինն է վերահաղորդվող ծրագրերի հարաբերակցությունը.



7 ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

Տեսալսողական ծրագրեր հեռարձակող 28 ընկերություններից 21-ը իրականացրել են թվային հեռարձակում, այդ թվում՝ 6 հանրապետական, 9 մայրաքաղաքային, 6 մարզային սփռման, և 7-ը իրականացրել են անալոգային հեռարձակում:

Հանրապետական սփռում իրականացնում են հետևյալ լիցենզավորված 6 Հեռարձակողները՝

«ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ

«h2» ծրագիր
«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՓԲԸ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ծրագիր
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ծրագիր
«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ

«ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» ծրագիր

Մայրաքաղաքային սփռում իրականացնում են հետևյալ լիցենզավորված 9 հեռարձակողները՝

«ԱՐ» ծրագիր
«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ

«21 TV» ծրագիր
«ԴԱՐ-21»
ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՌՈՍԻՅԱ-Կ» ծրագիր

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ.
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» ծրագիր

«ԱՐՄՆՅՈՒՋ» ծրագիր
«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր
«ՇԱՐԿ» ՍՊԸ

«Ա-ԹԻՎԻ» ծրագիր
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

«ՍԻ ԷՆ ԷՆ» ծրագիր
«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ

Հանձնաժողովն երաշխավորելով տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը, միաժամանակ միշտ կարևորում է վերջիններիս կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը, տեսալսողական հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը:

Ստորև ներկայացնում ենք Հանձնաժողովի կողմից փաստացի տվյալների հիման վրա՝ հանրապետական և մայրաքաղաքային սփռման տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքի և թեմատիկ ուղղվածությունների վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքները.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





ԱՅԼ՝ - հայրենական ընկերությունների կողմից պատրաստված ծրագրեր, հաղորդումներ

Իսկ ահա այսպիսի կառուցվածք ունի մարզային տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը և թեմատիկ ուղղվածությունները՝

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





ԱՅԼ,[1] - հայրենական ընկերությունների կողմից պատրաստված ծրագրեր, հաղորդումներ

Հաշվետու տարվա վերջին թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացրել 6 մարզային սփռման և անալոգային տիրույթում՝ 7 ընկերություններ: 2021 թվականին անալոգային տիրույթում գործող Հեռարձակողներն օրենքի ուժով կզրկվեն եթերային հեռարձակման հնարավորությունից: Սակայն, անհրաժեշտ ենք համարում նշել, որ տեղական անալոգային հեռարձակում իրականացնող ընկերությունները կորցրել էին իրենց հիմնական լսարանը, շատերն այլևս հնարավորություն չունեին պատրաստելու և հեռարձակելու որակյալ, բնակչության տեղեկատվական կարիքները բավարարող, մարզի սոցիալական, մշակութային, տնտեսական խնդիրները լուսաբանող բովանդակությամբ նյութեր: Ավելին, 2019 թվականին անալոգային տիրույթում հեռարձակում իրականացնող երեք Հեռարձակող, իսկ 2020 թվականին ևս երկու հեռարձակող (տես՝ Հավելված 4) իրենց դիմումի համաձայն հրաժարվել էին լիցենզիաներից, քանի որ ի զորու չէին եղել կատարելու օրենսդրությամբ սահմանված նորմերը, լիցենզիոն պարտավորությունները և Հանձնաժողովի օրինական պահանջները:

Իսկ ահա այսպիսի կառուցվածք ունի մարզային տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը և թեմատիկ ուղղվածությունները՝

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





ԱՅԼ,[1] - հայրենական ընկերությունների կողմից պատրաստված ծրագրեր, հաղորդումներ

Հաշվետու տարվա վերջին թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացրել 6 մարզային սփռման և անալոգային տիրույթում՝ 7 ընկերություններ: 2021 թվականին անալոգային տիրույթում գործող Հեռարձակողներն օրենքի ուժով կզրկվեն եթերային հեռարձակման հնարավորությունից: Սակայն, անհրաժեշտ ենք համարում նշել, որ տեղական անալոգային հեռարձակում իրականացնող ընկերությունները կորցրել էին իրենց հիմնական լսարանը, շատերն այլևս հնարավորություն չունեին պատրաստելու և հեռարձակելու որակյալ, բնակչության տեղեկատվական կարիքները բավարարող, մարզի սոցիալական, մշակութային, տնտեսական խնդիրները լուսաբանող բովանդակությամբ նյութեր: Ավելին, 2019 թվականին անալոգային տիրույթում հեռարձակում իրականացնող երեք Հեռարձակող, իսկ 2020 թվականին ևս երկու հեռարձակող (տես՝ Հավելված 4) իրենց դիմումի համաձայն հրաժարվել էին լիցենզիաներից, քանի որ ի զորու չէին եղել կատարելու օրենսդրությամբ սահմանված նորմերը, լիցենզիոն պարտավորությունները և Հանձնաժողովի օրինական պահանջները:

Ահա այսպիսին է մարզային սփռման և անալոգային տիրույթում Հեռարձակողների թիվը 2019 և 2020 թվականներին .



Վերջերս տեղի ունեցած տիրույթում հեռարձակում իրականացրել են հետևյալ Հեռարձակողները՝

- **Արմավիրի մարզ**

«ԼՈՒՅՍ» ծրագիր
«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱՋԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ
Գործել է մինչև 17.07.2020թ.

- **Արարատի մարզ**

«ԱՐԱՐԱՏ» ծրագիր
«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ
Գործել է մինչև 19.05.2020թ.

- **Գեղարքունիքի մարզ**

«ԳԵՂԱՄԱ» ծրագիր
«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ

- **Շիրակի մարզ**

«ՑԱՅԳ» ծրագիր
«ՑԱՅԳ» ՍՊԸ

- **Լոռու մարզ**

«ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր
«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ

- **Կոտայքի մարզ**

«Կոտայք ԹԻՎԻ»ծրագիր
«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ՍՊԸ

- **Տավուշի մարզ**

«Տավուշ ՏՎ» ծրագիր
«Տավուշ Մեդիա» ՍՊԸ

- **Սյունիքի մարզ**

«Զանգեզուր ՏՎ» ծրագիր
«ԶԱԳԵԶՈՐ»
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ

Անալոգային տիրույթում գործել են՝

Արմավիրի մարզում

1. «ԹԵՎ» ՍՊԸ («ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր)
2. «ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ («ԱԼՏ» ծրագիր)
3. «ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ («ԱՎԵՏԻՍ» ծրագիր)- գործել է մինչև 2020 թվականի մայիսի 19-ը

Շիրակի մարզում

1. «ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ («ԳԱԼԱ» ծրագիր) -գործել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 01-ը

Լոռու մարզում

1. «ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ («ՎԱՆԱՁՈՐ» հեռուստաընկերություն)
2. «ԼՈՌԻ ԹԻՎԻ» ՍՊԸ («ԼՈՌԻ» ծրագիր)
3. «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ («ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ծրագիր)
4. «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ («ՄԻԳ» ծրագիր)

Կոտայքի մարզ

1. «ՍԻՐԱԿ» ՍՊԸ («ՀՐԱԶԴԱՆ ԹԻ-ՎԻ» ծրագիր)

Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

Լիցենզավորված լսողական ծրագրեր հեռարձակող 18 ընկերություններից 3-ը գործել են Հայաստանի Հանրապետության, 13-ը՝ Երևան քաղաքի և 2-ը՝ մեկ մարզի տարածքում:

Լսողական մեդիածառայություն մատուցողների լիցենզավորման մրցույթները կայացել էին 2017 թվականին և լիցենզիաների գործողության ժամկետը մինչև 2027 թվականն է:

Հանրապետական սփռում իրականացնում են հետևյալ լիցենզավորված 3 լսողական մեդիածառայություն մատուցողները՝

«ՌԱԴԻՈ ԵՐԵՎԱՆ» ռադիոծրագիր
«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՋԱՆ»
ռադիոծրագիր
«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոծրագիր
«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

Երևան քաղաքում սփռում իրականացնում են հետևյալ լիցենզավորված 13 լսողական մեդիածառայություն մատուցողները՝

«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոծրագիր «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ռադիոծրագիր «ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ

«ԻՄՊՈՒԼՍ» ռադիոծրագիր «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ

«ՖՄ-105.5» ռադիոծրագիր «ՖՄ-105.5» ՍՊԸ

«ՎԱՆ» ռադիոծրագիր «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ

«ԱՐՄՆՅՈՒԶ ՖՄ» ռադիոծրագիր «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ

«ՔԻՍՍ էֆ էՄ» ռադիոծրագիր «ՔԻՍՍ էֆ էՄ» ՍՊԸ

«ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ռադիոծրագիր «ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոծրագիր «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ռադիոծրագիր «ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՓՈՓ էֆ էՄ» ռադիոծրագիր «էՅ ԴԻ թԻ» ՍՊԸ

«ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ռադիոծրագիր «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Լոռու մարզում գործում է՝

«ՄԻԳ» ռադիոծրագիր «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ

Շիրակի մարզում գործում է՝

«ՇԱՆԹ» ռադիոծրագիր «ՇԱՆԹ» ՍՊԸ

Հաշվետու տարում լսողական մեդիածառայություն մատուցողների համար նույնպես դժվար տարի էր, պայմանավորված կորոնավիրուսային համավարակով և արցախյան 2-րդ պատերազմով, սակայն նրանք կայուն զարգացել են, փոքր բացառությամբ (վարչական տույժի են ենթարկվել 3 լսողական մեդիածառայություն մատուցողներ), ապահովելով օրենսդրության պահանջները: Լսողական մեդիածառայություն մատուցողները շարունակել են օգտագործել տեսալսողական օնլայն հարթակներ, որտեղ հնարավոր է տեսնել պահոցային նյութեր, լսել և կարդալ հեղինակային հաղորդումներ, առցանց շփվել հաղորդավարի հետ և այլն: Այդ օնլայն հարթակների օգտագործումը հանդիսանում է նաև հավելյալ եկամուտների աղբյուր, ինչը նպաստում է լսողական մեդիածառայություն մատուցողների զարգացմանն ու անկախությանը:

Նախորդ տարիներին Հանձնաժողովի կողմից բարձրացված այն օրենսդրական բացթողման մասին, որ սահմանափակված է մասնավոր լսողական մեդիածառայություն (ռադիո) մատուցողների համար մրցույթով ռադիոհաճախականությունների

տրամադրումը, և այդ առումով անհասկանալի էր հատկապես մարզային սփռում իրականացնող լսողական մեդիածառայություն մատուցողների սահմանափակումը, Օրենքով այժմ այդ կարգավորվել է և հատկապես սահմանամերձ մարզերում լսողական մեդիածառայություն մատուցողները հուսով ենք, որ շուտով կհանդիսանան իրազեկման արագ միջոց, մշակույթի և կրթության տարածման լուրջ միջոց:

Ահա այսպիսին է լսողական մեդիածառայություն մատուցողների ծրագրերի եթերի կառուցվածքը և թեմատիկ ուղղվածությունները.



Առանց լիցենզիա հեռարձակում իրականացնող մեդիածառայություն մատուցողներ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի համաձայն առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին հեռարձակվել են հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը և միջպետական պայմանագրի հիման վրա գործող հեռարձակողները:

Հաշվետու տարում հեռարձակվել են հանրային հեռուստառադիոընկերության 2 տեսալսողական՝ հանրապետական սփռում ունեցող «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Շողակաթ» հեռուստածրագրերը և 4 լսողական ծրագրեր՝ հանրապետական սփռում ունեցող «Հայաստանի հանրային ռադիոընկերության» ՓԲԸ-ի Հանրային ռադիոյի առաջին ծրագիրը և մայրաքաղաքային սփռում ունեցող «Հայաստանի հանրային ռադիոընկերության» ՓԲԸ-ի «Իմ ռադիո», «ՎԷՄ» հոգևոր-մշակութային ծրագիրը և «Արևիկ» ծրագրերը:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՇՈՂԱԿԱԹ» ծրագիր
«ՀՈԳԵՎՈՐ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ռադիոծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԱՐԵՎԻԿ» ռադիոծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՎԷՄ» հոգևոր-մշակութային ռադիոծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ԻՄ ՌԱԴԻՈ» ռադիոծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

Միջպետական պայմանագրերի հիման վրա վերահեռարձակվել են մայրաքաղաքային սփռում ունեցող 1 տեսալսողական՝ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» հեռուստածրագիր (ռուսերեն լեզվով) և մայրաքաղաքային սփռում ունեցող 2 լսողական ծրագրեր՝ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ «ՄԻՐ» ռադիոծրագիր (ռուսերեն լեզվով) և «ԷՌ ԷՖ ԱՅ» (RFI) ռադիոծրագիր (Ֆրանսիա, ֆրանսերեն լեզվով):

«ՄԻՐ» ծրագիր
«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ

«ՄԻՐ» ռադիոծրագիր
«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ

«RFI» ֆրանսիական ռադիոծրագիր

8 ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով հստակ տարանջատվում են տեսալսողական մեդիածառայություն մատուցողները և տեսալսողական տեղեկատվություն տարածողները: Տեսալսողական տեղեկատվություն տարածողները՝ ցանցային օպերատորներն ընդամենը ազդանշանը օգտատերերին հասցնողներն են և տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կարող կրել:

Տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնող 68 ցանցային օպերատորներից 19-ը գործել են Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 8-ը՝ Երևան քաղաքի, 5-ը՝ մեկից ավելի մարզերի և 36-ը՝ մեկ մարզի տարածքում *(Հավելված 2)*:

Ահա այսպիսին է մալուխային ցանցերով տարածվող տեսալսողական ծրագրերի աշխարհագրությունը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՎՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2020թ.



Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման (նախկինում՝ հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորում) նոր ընթացակարգերի հետ կապված հարկ է նշել, որ այն առավել պարզեցվել է, միաժամանակ նվազագույնի են հասցվել դիմումների քննարկման ժամկետը, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերը՝ այժմ այլևս բիզնես ծրագիր, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին, սփռման տարածքում բնակարանների թվի մասին տեղեկանք ներկայացնելու պահանջ չկա:

Ահա, այսպիսին է կաբելային (մալուխային) ցանցով վերահաղորդվող տեսալսողական ծրագրերը պատկերը՝ ըստ թեմատիկ ուղղվածության և լեզվի.

ՎԵՐԱՀԱՂՈՐԴՎՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



ՎԵՐԱՀԱՂՈՐԴՎՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԵԶՈՒՆ



9 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Լիցենզավորման նոր ընթացակարգեր

Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման և լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորումը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ իրականացվում է մրցութային ընթացակարգով: Սակայն նոր կարգավորումների առավելությունը կայանում է նրանում, որ նույնական պայմաններով մրցույթների դեպքում Հանձնաժողովը հայտարարում է մեկ մրցույթ՝ սահմանելով սլոթերի քանակը, ինչը մրցակցային հավասար պայմաններ է ապահովում բոլոր մասնակիցների համար: Բացի այդ, հանրապետական սփռման մրցույթի մասնակիցներին նաև լիցենզիա ստանալու լրացուցիչ հնարավորություն է ընձեռվում. հանրապետական սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթի հայտատուն ըստ ցանկության միաժամանակ կարող է մասնակցել նաև մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթերի օգտագործման լիցենզավորման մրցույթին՝ այդ մասին նշում կատարելով հայտում, ինչը հնարավորություն է տալիս հանրապետական սփռման մրցույթի անցողիկ շեմը հաղթահարած, սակայն հանրապետական սփռման համար սահմանված սլոթերի քանակը ավելի բարձր վարկանիշային միավորներ ստացած մասնակիցների կողմից զբաղեցված լինելու դեպքում տվյալ մասնակցի վարկանիշային միավորը համադրել մայրաքաղաքային սփռման մրցույթի մասնակիցների վարկանիշային միավորների հետ, որի արդյունքում հաղթող է ճանաչվում առավելագույն վարկանիշային միավոր ստացած մասնակիցը:

Օրենքով Հանձնաժողովին տրվել է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը, մրցույթի մասնակցության հայտերի և դիմումի ձևը հաստատելու լիազորություն և Հանձնաժողովի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունվել է «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշումը:

Հանձնաժողովի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունվել է նաև «Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 96-Ն որոշումը:

Հանձնաժողովի մեկ այլ՝ 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 95-Ն որոշմամբ սահմանվել է նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման ընթացակարգը: Նոր կարգավորումները հնարավորություն են տալիս հետագայում հանրային մուլտիպլեքսի այլընտրանքային՝ մասնավոր մուլտիպլեքսի հիմնումն ու շահագործումը: Եթե նախկինում մասնավոր մուլտիպլեքսորը պարտավոր էր գործունեությունն իրականացնել սեփական էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփռման տարածքը չպետք է լիներ ավելի փոքր, քան Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակման թվային ցանցի սփռման տարածքը, ինչպես նաև մասնավոր մուլտիպլեքսորի ցանցի բաղադրիչները (ներառյալ՝ ռադիոկայանները, մալուխները, հեռարձակող սարքավորումները) պետք է լինեին մասնավոր մուլտիպլեքսորի սեփականությունը, ապա այժմ այդ սահմանափակումները հանվել են, իսկ սփռման տարածքը պետք է ընդգրկի նվազագույնը մեկ մարզի կամ Երևան քաղաքի տարածքը: Այնուամենայնիվ, դեռևս խնդրահարույց է մնում մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման համար սահմանված տարեկան պետական տուրքի բարձր՝ 100 մլն դրամ դրույքաչափը:

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները միտված են լիցենզավորման ընթացակարգերում վարչարարության նվազեցմանը, լիցենզավորման առավել թափանցիկության, մրցակցային հավասար պայմանների, հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովմանը:

2020 թվականի լիցենզավորման ցուցանիշներ

2020 թվականին Հանձնաժողով է ներկայացվել ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու 15 դիմում, որից 1-ը փաստաթղթերի թերի, ինչպես նաև ներկայացված տվյալների իրատեսական և հիմնավորված չլինելու հիմքով մերժվել է, սակայն հետագայում ներկայացվել է նոր դիմում, որը բավարարվել է: Արդյունքում տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 14 լիցենզիա, որից 4-ը՝ Երևան քաղաքի և մեկ կամ մի քանի մարզերի, 2-ը՝ Երևան քաղաքի, 1-ը՝ մեկից ավելի մարզերի և 7-ը՝ մեկ մարզի տարածքում սփռման համար *(Հավելված 3)*:

Հանձնաժողովը 2020 թվականին տրամադրել է հեռուստածրագրի եթերային հեռարձակման 1 լիցենզիա՝ 2019 թվականին հայտարարված թվային հեռարձակման ցանցի միջոցով ՀՀ Տավուշի մարզի տարածքում լիցենզավորման արտահերթ մրցույթի արդյունքում:

Հաշվետու ժամանակահատվածում լիցենզիաների գործողությունը դադարեցնելու մասին դիմումների համաձայն դադարեցվել է հեռուստածրագրի եթերային հեռարձակման 2 լիցենզիա, տեղական հեռուստաընկերությունների եթերային անալոգային հեռարձակման 2 լիցենզիա, հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 10 լիցենզիա, իսկ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով՝ հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 5 լիցենզիա *(Հավելված 4)*:

2020 թվականին լիցենզավորման գործառույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից վերաձևակերպվել է նաև 2 լիցենզիա:

Լիցենզավորման մրցույթներ

Հանձնաժողովը 2020 թվականի սեպտեմբերի 22-ին հայտարարել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթ՝ 6 սլոթերի քանակով, մայրաքաղաքային սփռման մրցույթ՝ 9 սլոթերի քանակով և մարզային սփռման 10 մրցույթ՝ յուրաքանչյուր մարզում մեկական սլոթերով:

Հիմք ընդունելով Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը՝ «ՌՏՌ-Պլանետա», «Ռոսիյա-Կ» և «Առաջին ալիք. Համաշխարհային ցանց» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների սլոթերի քանակը նվազել է՝ հանրապետական սփռման մրցույթում սլոթերի քանակը սահմանվել է 5, իսկ մայրաքաղաքային սփռման մրցույթում՝ 7:

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթներին մասնակցելու համար ներկայացվել է 29 հայտ՝ 12-ը հանրապետական սփռման մրցույթի մասնակցության, որից 3-ը միայն հանրապետական սփռման մրցույթի, իսկ 9-ը՝ միաժամանակ հանրապետական և մայրաքաղաքային սփռման մրցույթների, 4 հայտ ներկայացվել է միայն մայրաքաղաքային սփռման մրցույթի մասնակցության համար

(մայրաքաղաքային՝ ընդհանուր 13 հայտ) և 13 հայտ՝ մարզային սփռման մրցույթների մասնակցության համար:

Հեռարձակման և վերահեռարձակման թույլտվությունների տրամադրման գործընթաց

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի դրույթները պարտավորեցնում էին կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիոծրագրերը վերահեռարձակել, ինչպես նաև սեփական արտադրության հեռուստառադիոհաղորդումներ արտադրել և հեռարձակել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման:

Մինչև 2020 թվականի օգոստոսի 7-ը Հանձնաժողովին վերապահված կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող ընկերություններին ոչ սեփական հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման և սեփական արտադրության ծրագրերի հեռարձակման թույլտվություն տրամադրելու գործառույթների շրջանակում ուսումնասիրվել են ավելի քան 170 պայմանագրեր և հեռարձակման իրավունքը հավաստող այլ փաստաթղթեր, որի արդյունքում տրամադրվել են 880 ոչ սեփական ծրագրերի վերահեռարձակման թույլտվություններ և սեփական արտադրության 1 ծրագրի հեռարձակման թույլտվություն:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի համաձայն այս դրույթները (թույլտվությունների տրամադրման) չեն գործում և Օրենքով սահմանված են այլ կարգավորումներ: Նոր կարգավորումների շրջանակում ցանցային օպերատորների կողմից Հանձնաժողով են ներկայացվում տեղեկություն՝ իրենց ցանցերում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

10 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներն Օրենքի համաձայն գործելու են Հանձնաժողովի վերահսկողության ներքո, և սա ևս նոր գործառույթ է Հանձնաժողովի համար: Սակայն արձանագրենք, որ նոր օրենսդրական փոփոխությունների համաձայն նվազեցվել է ցանցային օպերատորների գործունեության հետ կապված վարչարարությունը և եթե նախկինում ցանցային օպերատորների կողմից տեսալսողական ծրագրերի վերահեռարձակում իրականացնելու համար պահանջվում էր ներկայացնել ծրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող պայմանագրեր, փաստաթղթեր և ստանալ ոչ սեփական ծրագրերը վերահեռարձակելու թույլտվություն, ապա նոր օրենսդրությամբ թույլտվություն ստանալու պահանջ չկա և այս պարագայում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներն են ծանուցում ներկայացնում տեսալսողական ծրագրերի վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ և հասցեական դարձնել տվյալ գործընթացը:

Այսպիսով, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները գործում են Հայաստանի Հանրապետությունում օրենսդրության համաձայն Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, Հանձնաժողովին վերապահված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման նոր գործառույթի շրջանակում, ներկայացված ծանուցումների հիման վրա ուսումնասիրվել են տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված ավելի քան 40 պայմանագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր, որի արդյունքում հաստատվել են 7 դիստրիբյուտորի կողմից ներկայացված շուրջ 130 տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումներ:

11 ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Մշտադիտարկման աշխատանքների ամփոփ ներկայացում

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթի շրջանակներում 2020 թվականի ընթացքում իրականացրել է ընդհանուր թվով 2932 օրերի ուղղակի դիտարկումներ, ընդ որում հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող Հեռարձակողների ծրագրերի 2135 և տարածքային սփռում իրականացնողների դեպքում՝ 797 օրերի համար:

Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովը կատարել է Հեռարձակողների կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով (մինչև 2020 թվականի օգոստոսի 7-ը) և Օրենքով (2020 թվականի օգոստոսի 7-ից մինչև դեկտեմբերի 31-ը) սահմանված կարգով և պարբերականությամբ մշտադիտարկում՝ վերջիններիս գործունեության և տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով: Կատարվել է նաև Հեռարձակողների կողմից տրամադրված հաշվառման մատյանների տվյալների (Օրենքի ընդունումից հետո՝ հաշվառման էլեկտրոնային մատյանների) ուսումնասիրություններ, ինչպես նաև վարել նշված տվյալների պահոցը՝ մշտապես պահելով այն արդիական գործող վիճակում:

Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Եվ ուղղակի, և տեղում դիտարկումները Հանձնաժողովի կողմից իրականացվել են պլանավորված՝ ամբողջ տարվա համար կազմված Հեռարձակողների և ցանցային օպերատորների ցանկի և ժամանակացույցի հիման վրա, ինչպես նաև պլանից դուրս՝ ըստ անհրաժեշտության, երբ որևէ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի գործունեության վերաբերյալ բողոք-գանգատ է ստացվել:

Առանձնահատուկ պետք է նշել Հանձնաժողովի աշխատանքը Covid-19-ով պայմանավորված համավարակային իրադրության պայմաններում: Կարևորելով քաղաքացիների օբյեկտիվ և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ Հանձնաժողովը մշտադիտարկումն իրականացնելիս հետևել է, որ համաճարակային իրադրության պայմաններում հանրությունը տեղեկատվությունը ստանա Հեռարձակողներին պարետի և պարետատան կողմից տրամադրված կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման և իրազեկման հոլովակների միջոցով:

Ստորև բերված է կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման և իրազեկման հոլովակների ցուցադրման տևողությունը.

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ՝

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ – **60.304** ՐՈՊԵ
ԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ – **86.100** ՐՈՊԵ

ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ՝ 2020թ. 17 ՄԱՐՏ – 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթների շրջանակում արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում առավել ուշադրությամբ կատարել է Հեռարձակողների տեսալսողական այն հաղորդումների մշտադիտարկումը, որոնք պարունակում էին տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող մարտական գործողությունների, դրանց ուղղությունների, մարտական տեխնիկայի շարժի, մարտական գործողությունների արդյունքում պատճառված կորուստների և վնասների, ինչպես նաև այլ տեղեկությունների վերաբերյալ; Մշտադիտարկման հիմքն այն էր, որ անկախ տեղեկույթի ձևավորման և ներկայացման ձևից և միջավայրից, այն է հրապարակումներ, տեղեկատվական նյութեր, հարցազրույցներ, հաղորդումներ և դրանց հետ անմիջականորեն առնչվող այլ նյութեր՝ տեղեկությունների հրապարակային տարածումը պետք է կատարվեր բացառապես պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության հղումով՝ ամբողջությամբ արտացոլելով պաշտոնական տեղեկատվությունն առանց խմբագրման: Այս ժամանակաշրջանում Հեռարձակողների տեսալսողական հաղորդումների մշտադիտարկումն իրականացվել է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով և ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշում սահմանված շրջանակներում և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի «Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 81-Ա որոշման պահանջների ապահովմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկման՝ տեղում դիտարկման գործառույթի շրջանակներում ՀՀ մարզեր կատարած 12 գործուղումների ընթացքում ուսումնասիրվել կամ մշտադիտարկման են ենթարկվել 15 Հեռարձակող և ցանցային օպերատոր: Տեղում դիտարկումների թիվը հաշվետու տարում նվազելու պատճառն այն է, որ Covid-19 համաճարակի, այնուհետև ռազմական դրության հետ կապված սահմանափակումների հետևանքով հնարավոր չէր ուսումնասիրությունների շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Սակայն, Հանձնաժողովն արագ արձագանքել է Հեռարձակողների խնդիրներին, Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի գործունեության վերաբերյալ բողոք-գանգատներին և այդ դժվարագույն պայմաններում իրականացրել է իր վրա դրված վերահսկողական գործառույթների կատարումը:

Օրենքով Հանձնաժողովի վերահսկողական գործունեության հետ կապված նոր կարգավորումներ են նախատեսվել և նոր դրույթների լիարժեք իրականացման նպատակով Հանձնաժողովի կողմից ընդունվել են օրենքով նախատեսված մեկ տասնյակի հասնող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական, անհատական և ներքին ակտեր:

2020 թվականը կարող ենք համարել Օրենքի դրույթների փորձարկման և ներդրման տարի, որի արդյունքների մասին առարկայական կկարողանանք խոսել 2021 թվականի տարեկան հաղորդման ժամանակ:

2020 թվականը Հանձնաժողովի համար եղել է նաև տեխնիկական վերազինման տարի: Հանձնաժողովում մշտադիտարկման գործընթացը ավելի արդյունավետ և դյուրին դարձնելու նպատակով ներդրվել են նոր տեխնիկական միջոցներ և մշտադիտարկման համար նախատեսված տեխնիկա-ծրագրային համակարգ: Նաև ներդրվել է ավտոմատացված ու ինտեգրացված տեղեկատվական համակարգ՝ լիցենզիա ստացած Հեռարձակողների կողմից հեռարձակված տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում գրանցման և հաշվառման նպատակով:







Նշված տեղեկատվական համակարգը կառավարվում է ընդհանուր սերվերից և միաժամանակ հասանելի է և Հեռարձակողների, և Հանձնաժողովի համար: Համակարգի օգտագործումն իրականացվում է համացանցի միջոցով համակարգին միացված համապատասխան համակարգչային ծրագրերի օգնությամբ: Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է լիցենզավորված Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին:

Ուսումնասիրությունների առանձին հատված է Հեռարձակողների կողմից տրամադրվող տեղեկատվության և ուղղակի դիտարկումների համադրմամբ վերլուծությունները, ինչպես նաև տեսալսողական ծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրությունը, ինչը թույլ է տալիս համապատասխան չափորոշիչներով անաչառ և հիմնավորված ձևով գնահատել Հեռարձակողների գործունեության որոշ բաղադրիչներ:

Հաշվետու տարում և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված կարգով Հանրային հեռարձակողի կողմից Հանձնաժողով է ներկայացվել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և ձևի:

Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են եռամսյա կտրվածքով և կարող ենք

արձանագրել, որ հաշվետու ժամանակահատվածում Հանրային հեռարձակողն ապահովել է հեռարձակվող հաղորդումների նկատմամբ բազմազանության ապահովման սկզբունքը:

2019 թվականին առաջին անգամ, հաշվետու տարում ևս Հանձնաժողովի կողմից հանրության, Հեռարձակող կազմակերպությունների և մեդիամասնագետների համար պարբերաբար պատրաստել և հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքները, վերլուծական հոդվածներ, գծապատկերներ, մշտադիտարկման արդյունքների ամփոփագրեր, հեռուստատեսային վարկանիշների տվյալներ և այլն: Հետազոտության արդյունքում ստացված տեղեկությունները ենթարկվել են վերլուծության և այդ տվյալներից մի քանիսը ներկայացված են *Հավելված 5-ով:*

Ստորև ներկայացնում ենք 2020 թվականի ընթացքում միջին օրական հեռուստադիտումը՝ ըստ թիրախային խմբերի.

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ՀԱՅԱՍՏԱՆ 4+



Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթներ

2020 թվականին Հանձնաժողովը շարունակելով իրականացնել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով, իսկ 2020 թվականի օգոստոսի 07-ին արդեն իսկ ուժի մեջ մտած «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորությունները տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկման արդյունքում, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և ցանցային օպերատորների կողմից տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու հիմքով Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների հիման վրա 2020 թվականին հայտնաբերված խախտումների վերաբերյալ հարուցել է 17 վարչական վարույթ: Հաշվետու տարում կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները՝ 3 տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և 4 ցանցային օպերատորների նկատմամբ կիրառվել է տուգանք, 2 տեսալսողական մեդիածառայություն մատուցողների նկատմամբ կիրառվել է գրավոր նախազգուշացում՝ խախտումները վերացնելու պահանջով, իսկ 2 տեսալսողական մեդիածառայություն մատուցողների նկատմամբ կիրառվել է լիցենզիայի գործողության կասեցում՝ տեսալսողական հաղորդմամ մասով՝ 30 օր ժամկետով: Օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումներ չարձանագրելու կամ խախտումները վերացնելու հիմքով հարուցված վարչական վարույթներից 6-ը կարճվել են:

2019 և 2020 թվականներին իրականացված վարչական վարույթների համեմատական վերլուծությունից գալիս ենք այն եզրահանգման, որ վարույթների քանակը նվազել է, ընդ որում, եթե 2019 թվականին դիմումների հիման վրա հարուցված վարույթների քանակը 4-ն են, իսկ Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվածը՝ 18-ը, ապա 2020 թվականին պատկերը լրիվ այլ է՝ դիմումների հիման վրա հարուցված վարույթների քանակը՝ 9-ն են, իսկ Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցվածը՝ 8-ը:

Ստորև ներկայացնենք 2019 և 2020 թվականների համեմատական պատկերը.



Հանձնաժողովը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս 2020 թվականի ընթացքում 1 տեսալսողական մեդիածառայություն մատուցողի նկատմամբ կիրառել է գրավոր նախազգուշացում՝ խախտումը վերացնելու պահանջով և 1 ցանցային օպերատորի նկատմամբ կիրառել է տուգանք:

Հանձնաժողովը սահմանելով էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները՝ խստագույնս վերահսկում է, որպեսզի տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից պահպանվեն չափորոշիչների սահմանված պահանջները: Այս համատեքստում Հանձնաժողովը կարևորում է անչափահասների իրավունքների, շահերի, անվտանգության պաշտպանությունը, քանի որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք, իսկ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների դերը այս հարցում կարևոր և առանցքային է:

Հանձնաժողովը հիմք ընդունելով սահմանված չափորոշիչները և կարևորելով հասարակության կողմից ազատ և անկողմնակալ տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ 2 տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (1 տեսալսողական և 1 լսողական) նկատմամբ չափորոշիչների պահանջները խախտելու համար կիրառել է տուգանք, որոնք վերաբերում են հաղորդման ընթացքում օրենքով արգելված ժամանակահատվածում բռնի գործողությունների խրախուսում, գռեհկաբանություն և հայհոյախոսություն պարունակող արտահայտություններ հնչեցնելուն:

Հանձնաժողովը, որպես տեսալսողական մեդիայի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմին՝ վերահսկողություն է իրականացնում նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից գովազդը կարգավորող դրույթների նկատմամբ: Հաշվետու տարում մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին գովազդային հոլովակների հեռարձակման գովազդի մասին օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների խախտում և 1 տեսալսողական մեդիածառայություն մատուցողի նկատմամբ կիրառվել է տուգանք, ինչպես նաև հաղորդման հեռարձակման ժամանակ արձանագրվել է հովանավորությունն արգելող դրույթի պահանջի խախտում և 1 լսողական մեդիածառայություն մատուցողի նկատմամբ կիրառվել է գրավոր նախազգուշացում՝ խախտումները հետագայում վերացնելու հանձնարարությամբ:

Մինչ Օրենքի ուժի մեջ մտնելը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով սահմանված կարգով ցանցային օպերատորները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների տեսալսողական ծրագրերը կարող էին վերահեռարձակել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման վրա և Հանձնաժողովի կողմից ցանցային օպերատորների գործունեության նկատմամբ իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև տեսալսողական ծրագրերի իրավատերերից ստացված դիմում-բողոքների հիման վրա արձանագրվել է առանց Հանձնաժողովի թույլտվության ոչ սեփական տեսալսողական ծրագրերի

վերահեռարձակման խախտումներ և 3 ցանցային օպերատորների նկատմամբ կիրառվել է տուգանք:

Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող Օրենքով տեսալսողական մեդիածառայություն մատուցողների տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ են սահմանվել և այս համատեքստում Հանձնաժողովը կարևորում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև տեսալսողական հաղորդումների չարաշահումը արգելող դրույթները: Հանձնաժողովի կողմից իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս արձանագրվել է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելու դրույթի պահանջի խախտում և 2 տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (մեկ տեսալսողական, մեկ լսողական) նկատմամբ կիրառվել է լիցենզիայի գործողության կասեցում՝ տեսալսողական հաղորդմամ մասով՝ 30 օր ժամկետով:

Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով 2 տեսալսողական մեդիածառայություն մատուցող դիմել են դատարան, որոնք գտնվում են ՀՀ վարչական դատարանի վարույթում: Դատարանների վարույթներում են գտնվում նաև դեռևս 2019 թվականին Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով 5 տեսալսողական մեդիածառայություն մատուցողների հայցերը (մեկ հայցը կարճվել է 2021 թվականին՝ հայցից հրաժարվելու հիմքով):

12 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նոր կորոնավիրուսային համավարակի (COVID-19) առաջացման և տարածման հետևանքով միջազգային համագործակցությունը որոշ չափով ետ մնաց նախատեսված ծրագրերից և ժամկետներից: Սակայն, չնայած բոլոր սահմանափակումներին, Հանձնաժողովը երկկողմանի և բազմակողմանի ձևաչափերով շարունակել է համագործակցել մի շարք երկրների մեդիակարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների ու հարթակների հետ՝ ուսումնասիրելով ոլորտում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները, կիրառման մեխանիզմները, կարգավորման առաջատար փորձը: Հանձնաժողովը հանդիսանում է կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) և Կենտրոնական Եվրոպայի կարգավորող ֆորումի (CERF) անդամ: 2020 թվականին Հանձնաժողովը մասնակցել է EPRA-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին՝ հեռավար կարգով, որոնց ընթացքում քննարկվել են «Շահումով խաղերի և խաղադրույքների գովազդը» և «Վերահսկողները ու քաղաքացիները» թեմաները, մինչդեռ BRAF-ի CERF-ի համաժողովները 2020 թվականի համար չեղարկվել էին:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի նախագծի աշխատանքների ընթացքում, Հանձնաժողովը՝ կնքված երկկողմ պայմանագրերի և հուշագրերի շրջանակներում, համագործակցել է Մոլդովայի, Չեխիայի, Իտալիայի կարգավորող մարմինների հետ,

քննարկել այդ երկրների օրենսդրական որոշ դրույթներ և փորձի փոխանակման արդյունքում կարողացել հնարավորինս օգտագործել ձեռք բերված տեղեկատվությունը:

Հանդիսանալով հաճախությունների հարցերով աշխատանքային խմբի (Spectrum Experts Working Group (SEWG)) անդամ, Հանձնաժողովի ներկայացուցիչը, հաշվետու տարում՝ կրկին հեռավար կարգով, ներկայացրել է Հանձնաժողովը կայացած համաժողովում, որի ընթացքում ընդգծվել է «Տարածաշրջանային հաճախականությունների պայմանագրի» ստեղծման կարևորությունը որում կընդգրկի 700ՄՀց ու 3,6Գհց հաճախականությունների հավասարեցման հարցը: Համաժողովից հետո՝ հաշվի առնելով անդամ երկրների կողմից ստացված մեկնաբանությունները և առաջարկությունները, աշխատանքային խմբին կներկայացվի պայմանագրի նախագիծը: Նախատեսվում է ստորագրել այն Արևելյան գործընկերության «Թվային տնտեսություն» խորագրով 2020-2021 թվականներին նախարարական հանդիպման (EaP Ministerial meeting on Digital Economy) շրջանակներում:

Դեռևս 2019 թվականին, Հանձնաժողովի նախաձեռնությամբ, սկիզբ դրվեց ԵԱՏՄ անդամ երկրների կարգավորող մարմինների հետ փոխգործակցության գործընթացը, որը շարունակվել է նաև 2020 թվականին: Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և զանգվածային հաղորդակցության բնագավառի վերահսկողության դաշնային ծառայության (Роскомнадзор) եւ Բելառուսի տեղեկատվության նախարարության ղեկավարությունների հետ ձեռք բերված պայմանավորվածությունները կնքել երկկողմանի Համաձայնագրեր տեղափոխվեց 2021 թվական (ՌԴ դաշնության ծառայության (Роскомнадзор) հետ համաձայնագիրը կնքվեց 2021 թվականի մարտին): Բելառուսի հետ համաձայնագիրը արդեն բերվել է վերջնական տեսքի և պատրաստ է ստորագրման:

Եվս երկու պատրաստ հուշագիր՝ Ուկրաինայի և Իրանի հետ, նույնպես կստորագրվեն 2021 թվականին:

2020 թվականին Հանձնաժողովի նախագահը ներգրավված է եղել աշխատանքային խմբում, որը ՌԴ թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարության հետ համատեղ մշակում էր ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրի նախագիծը (Համաձայնագիրը ստորագրվել է և ուժի մեջ է մտել 2020 թվականի դեկտեմբերի 30-ին):

2020 թվականին Հանձնաժողովի ներկայացուցիչը մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «ԵԱՏՄ անդամ պետություններում ինֆորմացիոն արտադրանքի տարիքային նշանների նկատմամբ պահանջների միասնական չափորոշիչներ սահմանելու հետ կապված հարցերի» քննարկմանը:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը մասնակցել է մի շարք միջազգային վեբինարներին՝ Լոնդոնի հեռահաղորդակցության միջազգային ինստիտուտի (IIC) կողմից կազմակերպած՝ «Կիբերանվտանգությունը ԵՄ-ում», «Վերահսկողությունը համավարակի ժամանակ» և «Բազմակարծություն, “fake news” և տվյալների պաշպանությունը», թեմաներով և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը տեսակապի միջոցով մասնակցել է «Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2019-2022թթ գործողությունների ծրագրի» Ղեկավար

կոմիտեի հանդիպմանը, որի նպատակն էր ամփոփել և գնահատել ԳԾ միջնաժամկետ արդյունքները և հաստատել ծրագրի գերակայություններն առաջիկա տարիների համար:

13 ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները պետական տուրքի գծով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրված 38 532 690 ՀՀ դրամ գումարը ապահովել են տեսալսողական ծրագրերի հեռարձակման, ցանցային օպերատորների գործունեության համար տարեկան պետական տուրքի, հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների մասնակցության, սահմանված ժամկետում չվճարված տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի, ինչպես նաև լիցենզիաների վերաձևակերպումների համար գանձված գումարների հաշվին:

Հաշվետու տարում Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների արդյունքում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և ցանցային օպերատորների նկատմամբ իրավախախտումների համար կիրառված տուգանքը կազմել է՝ 3 122 746 ՀՀ դրամ, որից 2020 թվականին ՀՀ պետական բյուջե փաստացի փոխանցված գումարը կազմել է 2 000 000 ՀՀ դրամ:

14 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: 2020 թվականի ընթացքում Հանձնաժողովը գումարել է 42 նիստ, ընդունվել է 156 որոշում՝ 5 նորմատիվ և 151 անհատական:

Ստորև ներկայացվում է 2019 և 2020 թվականներին Հանձնաժողովի կողմից գումարած նիստերի և ընդունած որոշումների տվյալները.

		2019	2020
ՆԻՍՏԵՐ		34	42
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ	ՆՈՐՄԱՏԻՎ	2	5
	ԱՆՀԱՏԱԿԱՆ	155	151

Հանձնաժողովն իրավական ոլորտի կարգավորման կատարելագործման գործընթացում հաշվետու տարում հետամուտ է եղել օրենքների դրույթների կիրարկման ապահովման նպատակով ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման և, իր կողմից ընդունված գործող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման աշխատանքներին, ինչպես նաև
«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի ընդունումից հետո օրենքով Հանձնաժողովին վերապահվել է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական, անհատական և ներքին ակտերի սահմանում: Հանձնաժողովը հաշվետու տարում սահմանել է հետևյալ իրավական ակտերը.

- «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից քարոզչության կողմերի համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին»,
- «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 30-ի N 42-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
- «Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանելու մասին»,
- «Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները սահմանելու մասին»,
- «Լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը սահմանելու մասին»,
- «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»,
- «Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»,
- «Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»,
- «Տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների և օպերատորների գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևերը սահմանելու մասին»,
- «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին»,
- «Հանրային հեռարձակողի կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու կարգը և ձևը սահմանելու մասին»,
- «Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի ընտրության ընթացակարգը սահմանելու մասին»,
- «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին»:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու տարում Հանձնաժողով մուտքագրվել է 463 գրություն, քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 59 դիմում-բողոք (մասնավորապես՝ տեսալսողական հաղորդումների անորակ լինելու, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու, վարչական վարույթ հարուցելու, հեղինակային իրավունքի խախտման մասին) որոնց պատասխան է տրվել համաձայն գործող օրենսդրական ակտերի:

Ստորև ներկայացվում է 2019 և 2020 թվականներին Հանձնաժողով մուտքագրված գրությունների, այդ թվում դիմում-բողոքների տվյալները: Համեմատական վերլուծությունից երևում է, որ չնայած 2020 թվականին գրությունների թիվը նվազել է 204-ով, սակայն քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմում-բողոքների թիվը ավելացել է 19-ով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՄՈՒՏՔԱԳՐՎԵԼ Է	2019	2020
ԳՐՈՒԹՅՈՒՆ	667	463
ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ	40	59

Հանձնաժողովն իր դիրքորոշումը հայտնել է նաև ՀՀ օրենքների, որոշումների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020 թվականի ընթացքում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համաձայն փոփոխություններ են կատարվել Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում: Օպտիմալացման նպատակով կրճատվել է Հանձնաժողովի ներքին աուդիտի բաժինը՝ իր երկու հաստիքներով:

Կազմակերպվել և անցկացվել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 6 մրցույթ: Հանձնաժողովի թափուր քաղաքացիական ծառայության պաշտոնների մրցույթները կազմակերպելու համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, մշակվել են հարցաշարեր՝ թեստավորման և հարցազրույցի փուլերի համար:

24 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են մասնակցելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված «Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի կիրառությունը և ֆունկցիոնալությունը», «Բարեվարքություն», «Որոշումների կայացում», «Կոնֆլիկտների կառավարում», «Ժամանակի կառավարում», «Տեղեկության հավաքագրում և վերլուծություն», «Հաշվետվությունների մշակում», «Խնդրի լուծում» թեմաներով դասընթացներին:

3 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են մասնակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Ծրագրային բյուջետավորում» թեմայով դասընթացներին:

Հանձնաժողովում ժամանակավոր թափուր պաշտոնների համար կնքվել են 2 ժամկետային աշխատանքային պայմանագրեր, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում:

Աշխատանքներ են կատարվել քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի Հանձնաժողովի բաժնում տեղեկությունների համալրման ուղղությամբ:

Հավելված 1

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2020 թվականի հաղորդման

ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՎԱԾ՝ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

հ/հ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը	Ծրագրի անվանումը	Հեղինակազորման վկայագրի սերիան, համարը	Որոշման ամսաթիվը, համարը
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	«Գեղամա»	ՀՎ № 001	21.08.2020թ. թիվ 72-Ա
2	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	«Ֆորտունա»	ՀՎ № 002	21.08.2020թ. թիվ 73-Ա
3	«ՑԱՅԳ» ՍՊԸ	«Ցայգ»	ՀՎ № 003	21.08.2020թ. թիվ 74-Ա
4	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	«Կենտրոն Թիվի»	ՀՎ № 004	21.08.2020թ. թիվ 75-Ա
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	«Լոռի»	ՀՎ № 005	21.08.2020թ. թիվ 76-Ա
6	«ՇԱՐԿ» ՍՊԸ	«5-րդ ալիք» «5 պլյուս»	ՀՎ № 006	21.08.2020թ. թիվ 77-Ա
7	«ԿՈՏԱՅՔ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	«Կոտայք Թի Վի»	ՀՎ № 007	21.08.2020թ. թիվ 78-Ա
8	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	«Երկիր մեդիա»	ՀՎ № 008	28.08.2020թ. թիվ 83-Ա
9	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	«Ալտ»	ՀՎ № 009	28.08.2020թ. թիվ 84-Ա
10	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	«Անկյուն գումարած 3»	ՀՎ № 010	28.08.2020թ. թիվ 85-Ա
11	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	«Ռադիո Երևան»	ՀՎ № 011	28.08.2020թ. թիվ 86-Ա
12	«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	«Բուն Թիվի»	ՀՎ № 012	28.08.2020թ. թիվ 87-Ա
13	«ՕԴԱԿ» ՍՊԸ	«Սոնգ Թիվի»	ՀՎ № 013	28.08.2020թ. թիվ 88-Ա
14	«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ	«Ա1+»	ՀՎ № 014	28.08.2020թ. թիվ 89-Ա
15	«ՇԱՆԹ» ՍՊԸ	«Շանթ» «Շանթ Պրեմիում» «Շանթ Մյուզիք» «Շանթ Նյուզ» «Շանթ Սերիալ» «Շանթ Քիդս» «Շանթ Սպորտ» «Շանթ Քոմեդի»	ՀՎ № 015	04.09.2020թ. թիվ 92-Ա
16	«ՄԵԴԻԱ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«Արարատնյուզ Թի Վի»	ՀՎ № 016	04.09.2020թ. թիվ 93-Ա

17	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	«Արմենիա» «Արմենիա Պրեմիում» «Տունտունիկ» «Քոմեդի» «Սինեման» «ՀայԿինո» «Ջան Թիվի» «Սերիալ»	ՀՎ № 017	08.09.2020թ. թիվ 99-Ա
18	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	«ՄԻԳ թիվի» «ՄԻԳ ռադիո»	ՀՎ № 018	08.09.2020թ. թիվ 100-Ա
19	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	«Ա-ԹԻՎԻ»	ՀՎ № 019	08.09.2020թ. թիվ 101-Ա
20	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	«Կինոման» «ֆիլմզոն» «Հայ Թիվի» «Թավա Թիվի» «ԽաղԱլիք» «Արմնյուզ 24» «Բազմոց Թիվի» «ֆիթնես Թիվի» «Մուզզոն»	ՀՎ № 020	18.09.2020թ. թիվ 109-Ա
21	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ	«Հ 2»	ՀՎ № 021	18.09.2020թ. թիվ 110-Ա
22	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ	«Արմնյուզ»	ՀՎ № 022	18.09.2020թ. թիվ 111-Ա
23	«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ	«Հիբրիդ Ռեստ» «Հիբրիդ Ֆիլմ» «Հիբրիդ Սպորտ» «Հիբրիդ Էդուքեյշընն»	ՀՎ № 023	18.09.2020թ. թիվ 112-Ա
24	«ՁԱԳԵԶՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	«Զանգեզուր ՏՎ»	ՀՎ № 024	18.09.2020թ. թիվ 113-Ա
25	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	«ԱՐ հեռուստաընկերություն»	ՀՎ № 025	18.09.2020թ. թիվ 114-Ա
26	«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	«Նոր Հայաստան»	ՀՎ № 026	18.09.2020թ. թիվ 115-Ա
27	«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ	«Մեր Թիվի»	ՀՎ № 027	18.09.2020թ. թիվ 116-Ա
28	«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Տավուշ հեռուստաընկերություն»	ՀՎ № 028	28.09.2020թ. թիվ 119-Ա
29	«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ	«Դելտա Թիվի» «Մենք»	ՀՎ № 029	19.10.2020թ. թիվ 126-Ա
30	«ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ	«Ֆակտոր»	ՀՎ № 030	19.10.2020թ. թիվ 127-Ա
31	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«21 Թիվի»	ՀՎ № 031	19.10.2020թ. թիվ 128-Ա
32	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ	«ԳԱԼԱ հեռուստա ընկերություն»	ՀՎ № 032	19.10.2020թ. թիվ 129-Ա

33	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	«Առաջին Թիվի»	ՀՎ № 033	19.10.2020թ. թիվ 130-Ա
34	«ՊՐՈԳՐԵՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Աշտարակ Թիվի»	ՀՎ № 034	26.10.2020թ. թիվ 134-Ա
35	«ՇԱՆԹ ԹԻՄ» ՍՊԸ	«Շանթ Գյումրի»	ՀՎ № 035	26.10.2020թ. թիվ 135-Ա
36	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	«Արմա Թի-Վի»	ՀՎ № 036	02.11.2020թ. թիվ 139-Ա
37	«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	«Նուռ» «Վելարի» «Սան Թիվի» «Այ Թի Սի» «Արմթուն Թիվի» «Վի»	ՀՎ № 037	02.11.2020թ. թիվ 140-Ա
38	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«Հանրային ժամանակ»	ՀՎ № 038	10.11.2020թ. թիվ 141-Ա

Հավելված 2

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2020 թվականի հաղորդման

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

h/h	Ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը
		Ք. ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԶԵՐ	
1	«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	N 186 16.10.2012թ. 16.10.2022թ.
2	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	N 187 06.11.2012թ. 06.11.2022թ.
3	«ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ, Վայոց ձորի մարզ	N 202 01.04.2015թ. 01.04.2025թ.
4	«ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 208 24.11.2015թ. 24.11.2025թ.
5	«ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 218 14.01.2017թ. 14.01.2027թ.
6	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Տավուշի մարզ, Սյունիքի մարզ	N 228 03.10.2017թ. 03.10.2027թ.
7	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի մարզ, Լոռու մարզ	N 229 03.10.2017թ. 03.10.2027թ.
8	«ՎԱԼԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Կոտայքի մարզ	N 252 22.12.2017թ. 22.12.2027թ.
9	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզեր	N 253 23.12.2017թ. 23.12.2027թ.
10	«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 255 10.04.2018թ. 10.04.2028թ.
11	«ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզեր	N 257 05.05.2018թ. 05.05.2028թ.

12	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 262 04.12.2018թ. 04.12.2028թ.
13	«ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան, Գեղարքունիքի մարզ	ԿՀ N 269 28.08.2019թ. 28.08.2029թ.
14	«ՅՈՏԱ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի մարզեր	ԿՀ N 272 08.10.2019թ. 08.10.2029թ.
15	«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	ԿՀ N 274 11.12.2019թ. 11.12.2029թ.
16	«ԹԻՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 281 14.07.2020թ. 14.07.2030թ.
17	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի մարզեր	ԿՀ N 283 15.09.2020թ. 15.09.2030թ.
18	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 285 25.09.2020թ. 25.09.2030թ.
19	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ԿՀ N 286 24.10.2020թ. 24.10.2030թ.
Ք. ԵՐԵՎԱՆ			
1	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 174 10.06.2011թ. 10.06.2021թ.
2	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 184 15.06.2012թ. 15.06.2022թ.
3	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
4	«ՅՈՐՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան	N 203 07.07.2015 թ. 07.07.2025 թ.
5	«ՄԵԴԻԱ ՔՈՆԹԵՆՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 249 17.11.2017թ. 17.11.2027թ.
6	«ՖԱՎՈՐԻՏ ԹԻ ՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 267 10.07.2019թ. 10.07.2029թ.

7	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 276 21.03.2020թ. 21.03.2030թ.
8	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	ԿՀ N 280 27.05.2020թ. 27.05.2030թ.
ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ			
1	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	N 194 11.01.2014թ. 11.01.2024թ.
2	«ԿՈԼՄԵՆԱ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Տավուշի մարզ	N 251 15.12.2017թ. 15.12.2027թ.
3	«ԴԻԶԻ ԹՎ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N 258 06.05.2018թ. 06.05.2028թ.
4	«ՖՐՈՒԹՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր	ԿՀ N 271 08.10.2019թ. 08.10.2029թ.
5	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	ԿՀ N 278 28.04.2020թ. 28.04.2030թ.
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	ԿՀ N 275 07.03.2020թ. 07.03.2030թ.
2	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	ԿՀ N 288 24.12.2020թ. 24.12.2030թ.
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N 183 22.05.2012թ. 22.05.2022թ.
2	«ԿԻՄ-ՌԱՅ» ՍՊԸ	ք. Մասիս	N 207 09.11.2015թ. 09.11.2025թ.
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
1	«ՀԱՌԻԶ ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	N 221 29.07.2017թ. 29.07.2027թ.
2	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N 250 21.11.2017թ. 21.11.2027թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
2	«ՊԼԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 219 04.07.2017թ. 04.07.2027թ.
3	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N 226 28.09.2017թ. 28.09.2027թ.
4	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	ԿՀ N 265 09.04.2019թ. 09.04.2029թ.
5	«ՌԵԳԻՈՆՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	ԿՀ N 284 23.09.2020թ. 23.09.2030թ.
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
1	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	N 206 09.11.2015թ. 09.11.2025թ.
2	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 212 05.04.2016թ. 05.04.2026թ.
3	«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ	ԿՀ N 259 20.07.2018թ. 20.07.2028թ.
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
1	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N 177 04.08.2011թ. 04.08.2021թ.
2	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 198 06.09.2014 թ. 06.09.2024 թ.
3	«ՀԱՃԸՆ ԻՄՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 220 25.07.2017թ. 25.07.2027թ.
4	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N 223 03.08.2017թ. 03.08.2027թ.
5	«ՔԱՆԹՐԻՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 254 18.01.2018թ. 18.01.2028թ.
6	«ՖԼԱՅՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N 256 05.05.2018թ. 05.05.2028թ.

7	«ՌԱԶՆԵՏԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 264 21.02.2019թ. 21.02.2029թ.
8	«ԱՐՄՔՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 266 18.06.2019թ. 18.06.2029թ.
9	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 277 22.04.2020թ. 22.04.2030թ.
10	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 282 10.09.2020թ. 10.09.2030թ.
11	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ԿՀ N 287 26.11.2020թ. 26.11.2030թ.
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N 182 18.05.2012թ. 18.05.2022թ.
2	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N 175 09.07.2011թ. 09.07.2021թ.
3	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N 222 02.08.2017թ. 02.08.2027թ.
4	ՕՖԵԼՅԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՁ	ՀՀ Շիրակի մարզ	ԿՀ N 289 24.12.2020թ. 24.12.2030թ.
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
1	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199 09.10.2014թ. 09.10.2024թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 201 24.03.2015թ. 24.03.2025թ.
3	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 209 29.12.2015թ. 29.12.2025թ.
4	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 213 09.07.2016թ. 09.07.2026թ.
5	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	N 215 21.12.2016թ. 21.12.2026թ.
6	«ՏԵԼԵՌԱԴԻՈ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ	ԿՀ N 268 24.08.2019թ. 24.08.2029թ.
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ			
–	–	–	–
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N 227 30.09.2017թ. 30.09.2027թ.

Հավելված 3

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2020 թվականի հաղորդման

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը
Ցանցային օպերատորի գործունեության				
1	«ԱՐԵՎ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	28.02.2020թ. թիվ 12-Ա	ԿՀ N 275 06.03.2020թ.
2	«ԲԵԴԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	17.03.2020թ. թիվ 16-Ա	ԿՀ N 276 20.03.2020թ.
3	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	17.04.2020թ. թիվ 22-Ա	ԿՀ N 277 21.04.2020թ.
4	«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզեր	22.04.2020թ. թիվ 25-Ա	ԿՀ N 278 27.04.2020թ.
5	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	19.05.2020թ. թիվ 27-Ա	ԿՀ N 280 26.05.2020թ.
6	«ԹԻՄ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	09.07.2020թ. թիվ 58-Ա	ԿՀ N 281 13.07.2020թ.
7	«ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	04.09.2020թ. թիվ 90-Ա	ԿՀ N 282 09.09.2020թ.
8	«ԷՅՉՆԵԹ» ՍՊԸ	ք. Երևան, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի մարզեր	08.09.2020թ. թիվ 97-Ա	ԿՀ N 283 14.09.2020թ.
9	«ՌԵԳԻՈՆՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	18.09.2020թ. թիվ 103-Ա	ԿՀ N 284 22.09.2020թ.
10	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	18.09.2020թ. թիվ 104-Ա	ԿՀ N 285 24.09.2020թ.

11	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	19.10.2020թ. թիվ 124-Ա	ԿՀ N 286 23.10.2020թ.
12	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	23.11.2020թ. թիվ 146-Ա	ԿՀ N 287 25.11.2020թ.
13	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	18.12.2020թ. թիվ 152-Ա	ԿՀ N 288 23.12.2020թ.
14	ՕՖԵԼՅԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՁ	ՀՀ Շիրակի մարզ	18.12.2020թ. թիվ 153-Ա	ԿՀ N 289 23.12.2020թ.
Հեռուստածրագրի եթերային հեռարձակման				
1	«ԺԱՆՄԵԳԱԼ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզ	22.04.2020թ. թիվ 24-Ա	ԵՀ N 279 28.04.2020թ.

Հավելված 4

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի 2020 թվականի հաղորդման

2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՐԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

հ/հ	Ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը	Լիցենզիայի համարը, սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը համարը	Դադարեցման հիմքը
Ցանցային օպերատորի գործունեության				
1	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	N 146 ք. Երևան	28.02.2020թ. թիվ 13-Ա	դիմումի համաձայն
2	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	N 137 ք. Երևան	_	լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով
3	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	N 214 ք. Նոր Հաճըն	17.04.2020թ. թիվ 22-Ա	դիմումի համաձայն
4	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	N 140 ք. Երևան	_	լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ	ԿՀ N 273 Հայաստանի Հանրապետություն	21.08.2020թ. թիվ 77-Ա	դիմումի համաձայն
6	«ՇԱՆԹ» ՍՊԸ	N 216 Հայաստանի Հանրապետություն	04.09.2020թ. թիվ 91-Ա	դիմումի համաձայն
7	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	N 205 Հայաստանի Հանրապետություն	08.09.2020թ. թիվ 98-Ա	դիմումի համաձայն
8	«ՓԻ ԲԻ ՍԻ» ՍՊԸ	N 211 Հայաստանի Հանրապետություն	18.09.2020թ. թիվ 105-Ա	դիմումի համաձայն

9	«ԼԱՅՔՆԵՏ» ՍՊԸ	ԿՀ N 270 ՀՀ Արագածոտնի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզեր	18.09.2020թ. թիվ 104-Ա	դիմումի համաձայն
10	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	N 181 ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	05.10.2020թ. թիվ 121-Ա	դիմումի համաձայն
11	«ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	ԿՀ N 263 Հայաստանի Հանրապետություն	19.10.2020թ. թիվ 125-Ա	դիմումի համաձայն
12	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	N 144 Հայաստանի Հանրապետություն	_	լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով
13	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՅԱՆՅԵՐ» ՍՊԸ	N 248 ՀՀ Կոտայքի մարզ, Լոռու մարզ	23.11.2020թ. թիվ 146-Ա	դիմումի համաձայն
14	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	N 147 ք. Աշտարակ	_	լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով
15	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	N 145 ք. Վանաձոր	_	լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու հիմքով
Հեռուստածրագրի եթերային հեռարձակման				
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ	N 168 ՀՀ Արարատի մարզ	19.05.2020թ. թիվ 28-Ա	դիմումի համաձայն
2	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ	N 158 ՀՀ Արմավիրի մարզ	17.07.2020թ. թիվ 64-Ա	դիմումի համաձայն
Եթերային (անալոգային) հեռարձակման				
1	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ	N 43 ք. Էջմիածին	19.05.2020թ. թիվ 29-Ա	դիմումի համաձայն
2	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ	N 98 ք. Գյումրի	01.12.2020թ. թիվ 149-Ա	դիմումի համաձայն

Հավելված 5

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի հաղորդման

ՀԵՌՈՒՍՏԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՍՈՑԻԱԼ - ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ 2020թ.

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+

45%
ՏՂԱՄԱՐԴ

55%
ԿԻՆ

ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՒՄ (ՐՈՊԵ)

206

227

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ԱՇԽԱՏՈՂ 45.1%
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ 3.8%
ԴՊՐՈՑԱԿԱՆ,ՈՒՍԱՆՈՂ 20.1%
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ 12.6%
ԳՈՐԾԱԶՈՒՐԿ 7.8%
ԹՈՇԱԿԱՌՈՒ 10.5%

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՉՈՒՆԵՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ[1] 8.8%
ՏԱՐՐԱԿԱՆ 13.6%
ՄԻՋՆԱԿԱՐԳ 29.9%
ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ 19. 3%
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ 28.4%

[1]Երեխաներ մինչեւ 6 տարեկան , մեծահասակներ, որոնք հիվանդության կամ այլ պատճառներով չեն ստացել տարրական կրթություն

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ 2020 թ.

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+

1/1/2020 – 12/31/2020		06 – 06		
		Armenia all4+		
Period	Selected channel	Rating %	Rating 000	Share %
year 2020	OTHER TV[1]	5.0	86.060	33.31
	ArmeniaTV	2.4	40.776	15.78
	Shant	1.8	31.652	12.25
	APTV(H1)	1.2	20.324	7.87
	ATV	0.8	13.656	5.29
	Armnews	0.8	13.547	5.24
	Kentron TV	0.8	13.407	5.19
	h2	0.4	6.943	2.69
	Erkir Media	0.3	5.246	2.03
	RTR – Planeta	0.3	4.708	1.82
	Nor Hayastan	0.3	4.669	1.81
	First Russian Channel	0.2	3.824	1.48
	AR	0.2	3.709	1.44
	5 TV	0.2	3.390	1.31
	Shoghakat TV	0.2	2.939	1.14
	MIR	0.1	1.681	0.65
	TV21	0.1	1.262	0.49
	Kultura	0.0	0.481	0.19
	CNN	0.0	0.101	0.04

ԿԻՐԱՌՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Rating (AMR) – Վարկանիշ՝ նպատակային լսարանից առանձնացված մարդկանց միջին թիվն է, որը դիտարկվող ժամանակահատվածում դիտել է կոնկրետ Հեռարձակողի հաղորդումները:Կարելի է հաշվել, թե՝ բացարձակ, թե՝ հարաբերական թվերով:

$$AMR = \frac{\sum_{k=1}^{n} AMR\, n}{\text{Program Duration}}$$

Share (SHR) –Մասնաբաժին՝ ցույց է տալիս, թե հեռուստացույցի մոտ գտնվող նպատակային լսարանի ո՞ր մասն է նախընտրել կոնկրետ Հեռարձակողի հաղորդումները դիտարկվող ժամանակահատվածում: Դիտարկվող ժամանակահատվածում, բոլոր Հեռարձակողների մասնաբաժինը կազմում է 100:

$$SHR\% = \frac{AMR}{TVR} * 100$$

OTHER TV [1] - ներկայացնում է ՀՀ –ում հեռարձակվող բոլոր մարզային և մալուխային տեսալսողական ծրագրերը

ՀԵՌՈՒՍՏԱԼՍԱՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՑՔԸ 2020 թ.

Համապատասխանության ինդեքսը (AFF) *փաստում է, որ հեռարձակումների ընդհանուր հեռուստադիտողների թվում գերակշռում են նպատակային լսարանի ներկայացուցիչները (նորման համարվում է 100-ը):*

$$\text{AFF} = \frac{Rating\ \%\ (\text{Նպատակային լսարան})}{Rating\%(\text{Ընդհանուր լսարան})} x100\%$$



ՀԵՌՈՒՍՏԱԼՍԱՐԱՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՕՐԵՐԻՆ 2020 թ.

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀԱՅԱՍՏԱՆ 4+

Total TVR